Տեղեկատվության ազատությունը նախարարություններում

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2010թ.-ի նոյեմբերի 27-ին եւ 2011թ.-ի փետրվարի 7-ին տեղեկատվություն ստանալու հարցումներ ուղարկեց ՀՀ բոլոր նախարարություններին: Նոյեմբերի 27-ի հարցումով ԻԱԿ-ը խնդրել էր հայտնել, թե որքա՞ն գումար է նախատեսվել 2010թ.-ի բյուջեով տվյալ նախարարության կարիքների համար գրենական պարագաների (թուղթ, գրիչ ծրար, թղթապանակ եւ այլն) ձեռքբերման համար, որքա՞ն գումար է ծախսվել գրենական պարագաների ձեռքբերման համար 2010թ.-ի նոյեմբերի 27-ի դրությամբ: Փետրվարի 7-ի հարցմամբ ԻԱԿ-ը խնդրել էր տրամադրել տեղեկություն այն մասին, թե կա՞ն արդյոք տվյալ նախարարության տնօրինության տակ փաստաթղթեր, որոնք գաղտնազերծվել են 2010թ.-ին, եւ եթե կան, ապա խնդրել էր տրամադրել այդ փաստաթղթերի պատճենները:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի այս նախաձեռնությունը բացի օգտակար տեղեկություններից, հնարավորություն տվեց նաեւ պարզել, թե ինչպես է նախարարություններից յուրաքանչյուրը կիրառում “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքը, որքանով են թափանցիկ հրապարակային աշխատում՝ համաձայն օրենքի պահանջների:

Ընդհանուր առմամբ ԻԱԿ-ի կողմից բոլոր նախարարություններին ուղարկվել է 36 հարցում՝ յուրաքանչյուր նախարարությանը 2-ական հարցում (հաշվի առնված չեն կրկնակի կամ ճշտումների համար ուղարկված միջանկյալ հարցումները), որոնցից 4-ի արդյունքում ԻԱԿ-ի հարցումները մնացել են անպատասխան, 2-ի դեպքում տեղեկատվության տրամադրումը գրավոր մերժվել է, 1-ի դեպքում էլ հղում է արվել էլեկտրոնային կայքին (վիճակագրության տվյալների մասին ավելի մանրամասն՝ տես վերլուծությունում): Մնացած 29 հարցումների դեպքում ԻԱԿ-ը գրավոր պատասխան է ստացել, որոնցից 12-ը՝ 7-օրյա ժամկետում (նշված ժամկետը ներառում է նաեւ հանգստյան օրերը): Այս վիճակագրությունը տոկոսային արտահայտմամբ ներկայացված է ստորեւ բերված աղյուսակում:



ՀՀ առողջապահության նախարարությունը եւ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը ԻԱԿ-ի առաջին հարցումը թողել են անպատասխան: Ուստի, առողջապահության նախարար Հարություն Քուշկյանը եւ արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը հայտնվել են Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ տեղեկատվության ազատությունը խախտած պաշտոնյաների Սեւ ցուցակում, որը հրապարակված է ԻԱԿ www.foi.am/hy/black-list/ կայքում:

ՀՀ առողջապահության նախարարությունն անպատասխան է թողել նաեւ ԻԱԿ-ի փետրվարի 7-ի հարցումը: Նշենք, որ այս անգամ եւս Ինֆորմացիայի ազատության կենտրոնի երկրորդ հարցմանը ըստ էության անպատասխան է թողել ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունը. ի պատասխան ԻԱԿ-ի՝ 07.02.2011թ.-ի հարցմանը՝ 24.02.2011թ. թվագրված պատասխան գրությամբ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը հայտնել է, որ 2010թ.-ին ՀՀ Հատուկ քննչական ծառայության կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալության գործունեության հետ կապված հարուցված քրեական

գործի շրջանակներում ՀՀ Հատուկ քննչական ծառայության միջնորդությամբ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից գաղտնազերծվել են մի շարք փաստաթղթեր: Սակայն այդ փաստաթղթերի պատճենները չեն կարող տրամադրվել, քանի որ քրեական գործի շրջանակներում դրանք առգրավվել են ՀՀ Հատուկ քննչական ծառայության կողմից: 2011թ.-ի մարտի 16-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը գրավոր հարցմամբ դիմեց ՀՀ Հատուկ քննչական ծառայությանը՝ խնդրելով տրամադրել ՀՀ ԱԻ նախարարությունից առգրավված գաղտնազերծված փաստաթղթերի պատճենները: Ի պատասխան՝ 2011թ.-ի մարտի 21-ին ՀՀ Հատուկ քննչական ծառայությունը պատասխանեց, որ վերոնշյալ քրեական գործով առգրավված փաստաթղթերը հիմնականում վերադարձվել են, քրեական գործում առկա են որոշ փաստաթղթերի բնօրինակներ, որոնք ճանաչվել են որպես ապացույց: Պատասխան գրությունում նաեւ նշված էր, որ առգրավված փաստաթղթերի պատճեններն ի սկզբանե մնացել են ԱԻ նախարարությունում: Այսինքն, այս դեպքում տեղեկատվություն տնօրինողը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունն է, որն իրականում տնօրինել է ԻԱԿ խնդրած տեղեկությունները, քանի որ գաղտնազերծված փաստաթղթերի պատճեններն ի սկզբանել առկա են եղել նախարարությունում, սակայն հրում է արել ՀՀ Հատուկ քննչական ծառայությանը: 2011թ.-ի մարտի 29-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը նորից գրավոր հարցում ուղարկեց ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ նշելով ՀՀ Հատուկ քննչական ծառայության պատասխանը եւ խնդրեով տրամադրել ԱԻՆ կողմից 2010թ.-ին գաղտնազերծված փաստաթղթերի պատճենները: ԻԱԿ-ի կողմից կրկնակի հարցումն ուղարկելուց անցել է շուրջ մեկ ամիս, սակայն ՀՀ ԱԻ նախարարությունը դեռեւս չի պատասխանել հարցմանը:

Պատասխան գրությունների բովանդակությունը, գրավոր մերժումներ, հրում.

Այժմ ներկայացնենք ԻԱԿ-ի հարցումներին ի պատասխան նախարարությունների ուղարկած պատասխան գրությունների բովանդակությունը: Նախ՝ ԻԱԿ-ի առաջին՝ 2010թ.-ի նոյեմբերի 27-ի հարցման պատասխանների մասին. ինչպես նշվեց, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը նախարարություններին խնդրել էր հայտնել, թե որքա՞ն գումար է նախատեսվել 2010թ.-ի բյուջեով տվյալ նախարարության կարիքների համար գրենական պարագաների ձեռքբերման համար եւ որքա՞ն գումար է ծախսվել գրենական պարագաների ձեռքբերման համար 2010թ.-ի նոյեմբերի 27-ի դրությամբ: Հարցմանը պատասխանած բոլոր 16 նախարարությունները էլ տվել են պատշաճ պատասխան: ԻԱԿ հարցմանը պատասխանած նախարարություններից 15 տրամադրել են խնդրված տեղեկությունները, իսկ մեկը՝ ՀՀ Պաշտպանության նախարարությունը, մերժել է տրմադրել խնդրված տեղեկությունները՝ նշելով մերժման հիմքերը: ՀՀ Պաշտպանության նախարարությունը նշել է, որ ՀՀ Կառավարության 13.03.1998թ.-ի թիվ 173 որոշմամբ հաստատված է ՀՀ պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը, որի “Ռազմական բնագավառի

տեղեկություններ” մասի 4-րդ եւ 5-րդ կետերի համաձայն ԻԱԿ խնդրած տեղեկությունները վերաբերում են զորքերի գործունեության ապահովվածությանը, այլ նյութական միջոցներով ապահովելուն վերաբերող տեղեկություններին, ուստի համարվում են պետական գաղտնիք: Բացի այդ, ՀՀ ՊՆ-ը նշել է, որ ՀՀ Կառավարության 24.12.2009թ.-ի թիվ 1522-Ն որոշման եւ ՀՀ պաշտպանության նախարարի 21.12.2009թ.-ի թիվ 00296 հրամանի համաձայն՝ ԻԱԿ խնդրած տեղեկությունները համարվում են հույժ գաղտնի: “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է, որ տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկատվության տրամադրումը, եթե դա պարունակում է պետական գաղտնիք: Ուստի, ՀՀ Պաշտպանության նախարարությունը չի կարող տրամադրել ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունները:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցմանը պատասխանած մնացած 15 նախարարությունները տրամադրել են ԻԱԿ խնդրած տեղեկությունները, որոնք ներկայացված են ստորեւ բերված աղյուսակում:

Հ/Հ	Նախարարությունը	Գրենական պարագաների ձեռքբերման համար	
		Բյուջեով նախատեսվել է	Ծախսվել է
1.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	2.288.300	1.495.200
2.	ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունություն	6.242.000	5.114.400
3.	ՀՀ առողջապահության նախարարություն	*Անպատասխան է թողել ԻԱԿ-ի հարցումը*	
4.	ՀՀ արդարադատության նախարարություն	8.802.400	Ամբողջ գումարը ծախսվել է “Գնումների մասին” ՀՀ օրենքին համապատասխան
5.	ՀՀ արտակարգ իրավիճանկերի նախարարություն	*Անպատասխան է թողել ԻԱԿ-ի հարցումը*	
6.	ՀՀ արտաքին գործերի նախարարություն	9.043.100	8.871.500
7.	ՀՀ բնապահպանության նախարարություն	3.853.600	2.719.700
8.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	4.342.100	1.592.600

9.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	3.000.000	1.389.000
10.	ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարություն	3.076.200	1.646.400
11.	ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն	2.403.300	2.186.600
12.	ՀՀ մշակույթի նախարարություն	5.668.100	3.891.300
13.	ՀՀ պաշտպանության նախարարություն	*Մերժում – խնդրված տեղեկությունը համարվում է պետական գաղտնիք*	
14.	ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարություն	5.078.700	2.673.300
15.	ՀՀ սփյուռքի նախարարություն	Նախարարության մասով – 2.334.700 Նախարարի մասով – 341.900	Նախարարության մասով – 1.602.680 Նախարարի մասով – 213.870
16.	ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարություն	2.683.700	2.590.940
17.	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	4.619.100	3.233.300
18.	ՀՀ ֆինանսների նախարարություն	47.329.900	29.688.800

Նշենք, որ ըստ ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանի՝ նախատեսված եւ ծախսված գումարը ներառում է ոչ միայն գրասենյակային նյութերը, այլ նաեւ հագուստը, քանի որ նախատեսված գումարը սահմանված է բյուջեի “Գրասենյակային նյութեր եւ հագուստ” հոդվածով: Ամեն դեպքում, գրենական պարագաների ձեռքբերման համար ՀՀ ֆինանսների նախարարությանը հատկացված գումարը հարցմանը պատասխանած բոլոր նախարարությունների շրջանում ամենաշատն է՝ 47.329.900 դրամ: ՀՀ ֆինանսների նախարարության ցուցանիշն ավելի քան 20 անգամ ավել է գրենական պարագաների ձեռքբերման համար ամենաքիչ գումար ստացած ՀՀ տարածքային կառավարման նախարարության ցուցանիշից (2.288.300 դրամ) եւ ավելի քան 5 անգամ ավել 2-րդ տեղը զբաղեցնող ՀՀ արտաքին գործերի նախարարության ցուցանիշից (9.043.100 դրամ):

Ի պատասխան ԻԱԿ-ի առաջին հարցմանը՝ ոչ մի նախարարություն հղում չի արել այլ աղբյուրի:

Այժմ ԻԱԿ-ի երկրորդ՝ 2011թ.-ի փետրվարի 7-ի հարցման պատասխանների մասին. Այս հարցումով Ինֆորմացիայի ազատության կենտրոնը նախարարություններին խնդրել էր հայտնել, թե կա՞ն արդյոք տվյալ նախարարության տնօրինության տակ փաստաթղթեր, որոնք գաղտնազերծվել են 2010թ.-ին, եւ եթե կան, ապա խնդրել էր

տրամադրել այդ փաստաթղթերի պատճենները: Ինչպես նշվեց, ՀՀ առողջապահության նախարարությունը եւ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը այս անգամ եւս ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունները չեն տրամադրել (տես՝ էջ 1, 2): ՀՀ պաշտպանության նախարարությունն այս անգամ եւս մերժել է տրամադրել ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունները՝ 2010թ.-ին գաղտնազերծված փաստաթղթերի պատճենները: Սակայն այս անգամ ՀՀ ՊՆ մերժումն այնքան էլ հստակ չէր ձեւակերպված: ՀՀ պաշտպանության նախարարությունը նշել է. "ՀՀ զինված ուժերում պետական եւ ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունները պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու, պաշտպանելու եւ գաղտնազերծելու կապակցությամբ ծագող հարցերը կանոնակարգվում են "Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին" ՀՀ օրենքի եւ ՀՀ Պաշտպանության նախարարի համապատասխան գաղտնի հրամանների պահանջներին համապատասխան: Փաստաթղթերի պահպանության ժամկետների սպառման, անհրաժեշտությունն անցնելու կամ նորով փոխարինելու պատճառներով գործածության համար ոչ պիտանի բոլոր փաստաթղթերը ոչնչացվում են սահմանված կարգով: Ինչպես ամեն տարի, այնպես էլ 2010 թվականի ընթացքում, ՀՀ պաշտպանության նախարարությունում գաղտնազերծվել են անձնակազմին վերաբերող որոշակի քանակությամբ փաստաթղթեր: Համաձայն "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը չի կարող Ձեզ տրամադրել իր տնօրինության տակ գտնվող 2010 թվականի ընթացքում գաղտնազերծված փաստաթղթերի պատճենները:"

Նշենք, որ "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է տեղեկատվության ազատության սահմանափակումները՝ նշելով, թե տեղեկատվությոն տնօրինողը որ տեղեկությունները չի տրամադրում (պետական, ծառայողական, բանկային, առեւտրայի, գաղտնիքներ, բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիքներ, անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտող տեղեկություններ, հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ, հեղինակային եւ (կամ) հարակից իրավունքները խախտող տեղեկություններ): Նախարարության պատասխանից չի հասկացվում, թե իրականում ինչն է մերժման պատճառը. եթե այն, որ գաղտնազերծված փաստաթղթերը սահմանված կարգով ոչնչացվել են եւ առկա չեն, ապա նախարարությունն ուղղակի կարող էր նշել, որ գաղտնազերծված փաստաթղթերը ոչնչացվել են, եւ քանի որ դրանք այլեւս գոյություն չունեն, հնարավոր չէ դրանք տրամադրել: Իսկ եթե գաղտնազերծված փաստաթղթերն առկա են, ապա անհասկանալի է, թե ինչպես գաղտնազերծված փաստաթղթերը, որոնք այլեւս գաղտնիք չեն համարվում, չեն կարող տրամադրվել "Տեղեկատվության աատության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի սահմանած հիմքերով, մասնավորապես՝ գաղտնիք համարվելու հիմքով: Ի տարբերություն ՀՀ ՊՆ առաջին մերժման՝ երկրորդ

մերժման մեջ անգամ նշված չէր, թե “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի որ կետի համաձայն է մերժվում տեղեկատվության տրամադրումը, այնինչ այս հոդվածի 1-ին մասը 5 կետով նախատեսում է տեղեկատվության տրամադրումը մերժելու 5 տարբեր հիմքեր:

Մնացած 15 նախարարություններից 13-ը ի պատասխան ԻԱԿ-ի հարցման՝ նշել են հետեւյալ պատասխաններից մեկը. նախարարության տնօրինության տակ 2010 թվականի ընթացքում գաղտնազերծված փաստաթղթեր չկան, առկա չեն, նախարարությունում 2010 թվականի ընթացքում փաստաթղթեր չեն գաղտնազերծվել: Մեկ նախարարություն՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, նշել է, որ 2010թ.-ին գաղտնազերծվել է 1 փաստաթուղթ՝ 2010թ.ին ՀՀ ԱԳՆ համակարգմամբ իրականացված Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի՝ 2008թ.-ի մարտի 15-17-ին կատարած այցելության վերաբերյալ Հայաստանի կառավարությանը ներկայացված եւ նշված զեկույցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության պատասխանը: ՀՀ ԱԳՆ-ը հղում է արել Եվրոպայի խորհրդի կայքէջին՝ նշելով, որ նշյալ փաստաթուղթը հասանելի է անգլերեն եւ հայերեն տարբերակներով: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը այցելեց վերոնշյալ կայքը եւ գտավ ՀՀ արտաքին գործերի նախարարության՝ 2010թ.-ին գաղտնազերծված փաստաթուղթը նախարարության նշած հասցեով: Մեկ նախարարություն էլ՝ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությունը, պատասխան գրությամբ նշել է, որ համաձայն “Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին” ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ գաղտնագրված տեղեկությունները գաղտնազերծումից հետո հանձնվում են ՀՀ պետական արխիվի պահպանությանը կամ ոչնչացվում են սահմանված կարգով՝ այսպիսով անուղղակիորեն եւ ոչ հստակ հայտնելով, որ պահանջվող տեղեկությունները կամ առկա չեն կամ էլ գտնվում են այլ մարմնի (ՀՀ ազգային արխիվի) տնօրինության տակ:

Հատկանշական իրավիճակ ստեղծվեց կապված ՀՀ բնապահպանության եւ ՀՀ քաղաքաշինության նախարարությունների պատասխան գրությունների հետ. բանն այն է, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2011թ.-ին դիմել է ՀՀ ազգային արխիվ՝ խնդրելով տրամադրել այն կազմակերպությունների ցանկը, որոնցից արխիվը 2007-2010թ.թ.-ի ընթացքում ստացել է գաղտնազերծված փաստաթղթեր: ՀՀ ազգային արխիվի պատասխան գրության համաձայն՝ 2010թ.-ին արխիվը ՀՀ բնապահպանության եւ ՀՀ քաղաքաշինության նախարարություններից գաղտնազերծված փաստաթղթեր է ստացել՝ ՀՀ բնապահպանության նախարարությունից 1942-2003թ.թ. վերաբերող 571 գործ, ՀՀ քաղաքաշինության նախարարությունից՝ 1960-1995թ.թ. վերաբերող 102 գործ: Այնինչ այս նախարարություններն իրենց պատասխան գրություններով ԻԱԿ-ին հայտնել էին, որ նախարարություններում 2010 թվականին փաստաթղթեր չեն գաղտնազերծվել:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի երկրորդ հարցման բոլոր պատասխանները ներկայացված են ստրեւ բերված աղյուսակում (օբյեկտիվության պահպանման նպատակով պատասխանները չեն ընդհանրացրվել, այլ ներկայացվել է պատասխանի համապատասխան հատվածը բառացի).

Հ/Հ	Նախարարությունը	Պատասխանը
1.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	… նախարարության տնօրինության տակ 2010 թվականի ընթացքում գաղտնազերծված փաստաթղթեր չկան
2.	ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունություն	… նախարարությունն իր տնօրինության տակ 2010 թվականին գաղտնազերծված փաստաթղթեր չունի
3.	ՀՀ առողջապահության նախարարություն	*Անպատասխան է թողել ԻԱԿ-ի հարցումը*
4.	ՀՀ արդարադատության նախարարություն	… նախարարությունում 2010 թվականին գաղտնազերծված փաստաթղթեր առկա չեն
5.	ՀՀ արտակարգ իրավիճանկերի նախարարություն	*Նախ՝ հղում է արել ՀՀ Հատուկ քննչական ծառայությանը, ապա՝ անպատասխան է թողել ԻԱԿ-ի կրկնակի հարցումը*
6.	ՀՀ արտաքին գործերի նախարարություն	*Հղում www.cpt.coe.int/en/states/arm.htm կայքին*
7.	ՀՀ բնապահպանության նախարարություն	… նախարարությունում 2010 թվականի ընթացքում փաստաթղթեր չեն գաղտնազերծվել
8.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	… նախարարությունը 2010 թվականին գաղտնազերծված տեղեկատվություն չի ունեցել
9.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	… նախարարության տնօրինության տակ 2010 թվականին գաղտնազերծված փաստաթղթեր չկան
10.	ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարություն	… 2010թ. ընթացքում ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությունում որեւէ փաստաթուղթ չի գաղտնազերծվել
11.	ՀՀ կրթության եւ գիտության	… նախարարության տնօրինության

	նախարարություն	տակ 2010թ.-ին գաղտնազերծված փաստաթղթեր չկան
12.	ՀՀ մշակույթի նախարարություն	… նախարարության տնօրինության տակ չկան 2010թ. գաղտնազերծված փաստաթղթեր
13.	ՀՀ պաշտպանության նախարարություն	*Մերժում*
14.	ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարություն	… նախարարության տնօրինության տակ չկան այնպիսի փաստաթղթեր, որոնք գաղտնազերծված լինեն 2010 թվականին
15.	ՀՀ սփյուռքի նախարարություն	… նախարարության տնօրինության տակ չկան 2010թ. գաղտնազերծված փաստաթղթեր
16.	ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարություն	… գաղտնագրված տեղեկությունները գաղտնազերծումից հետո հանձնվում են ՀՀ պետական արխիվի պահպանությանը կամ ոչնչացվում են
17.	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	… 2010 թվականին ՀՀ քաղաքաշինության նախարարությունում փաստաթղթեր չեն գաղտնազերծվել
18.	ՀՀ ֆինանսների նախարարություն	… նախարարության տնօրինության տակ գտնվող գաղտնի փաստաթղթերից 2010 թվականին չեն գաղտնազերծվել

Ժամկետները.

Այժմ ներկայացնենք, թե ինչ ժամկետներում են նախարարությունները պատասխանել ԻԱԿ հարցումներին: ԻԱԿ-ի հարցումներին գրավոր պատասխան, մերժում կամ հողում ուղարկած 16 նախարարությունները (հաշվի առնված չեն արդյունքում ԻԱԿ-ի հարցումներն անպատասխան թողած ՀՀ առողջապահության եւ ՀՀ արտակարգ իրավիճակների նախախարարությունները) Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցումներին պատասխանել են միջինը (հաշվարկված է թվաբանական միջինով) 19-օրյա ժամկետում: “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: ԻԱԿ-ը հարցումներն ուղարկել է փոստով՝ 2010թ.-ի նոյեմբերի 27-ին՝ շաբաթ օրը եւ 2011թ.-ի փետրվարի 7-ին՝երկուշաբթի օրը: Ուստի, պետք է նկատի

ունենալ, որ հարցումները հասցեատերերին հասել են հարցումն ուղարկելուց 1-3 օր հետո, սակայն անճշտություններից խուսափելու համար ժամկետները հաշվարկելիս որպես հիմք ընդունվել են հարցումներն ուղարկելու օրը եւ պատասխան գրության ծրարի վրա փոստային ծառայության կնիքի մեջ նշված՝ պատասխան գրությունն ուղարկելու օրը:

Հաշվի առնելով ԻԱԿ-ի ուղարկած 2 հարցումներին ի պատասխան ուղարկված գրությունների ժամկետներն առանձին-առանձին, ապա ժամկետների առումով լավագույնը ՀՀ մշակույթի նախարարությունն է, որը ԻԱԿ երկրորդ՝ 2011թ.-ի փետրվարի 7-ի հարցմանը պատասխան գրությունն ուղարկել է 2011թ.-ի փետրվարի 11-ին՝ ԻԱԿ-ի՝ հարցումն ուղարկելուց 4 օր անց: Մշակույթի նախարարությանը հաջորդում են ՀՀ կրթության եւ գիտության, ՀՀ պաշտպանության եւ ՀՀ սփյուռքի նախարարությունները, որոնք ԻԱԿ-ի առաջին հարցմանը պատասխանել են 5-օրյա ժամկետում, ապա՝ ՀՀ տարածքային կառավարման, ՀՀ արտաքին գործերի, ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների, ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի եւ ՀՀ ֆինանսների նախարարությունները՝ որոնք ԻԱԿ-ի նույնպես առաջին հարցմանը պատասխանել են 6-օրյա ժամկետում: Նշենք, որ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը, որը չնայած ԻԱԿ-ի առաջին հարցման պատասխանն ուղարկել է 13-օրյա ժամկետում՝ 2010թ.-ի դեկտեմբերի 10-ին, սակայն 6-օրյա ժամկետում ներկայացրել է միջանկյալ գրություն՝ ծանուցում՝ նշելով նաեւ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցմանը պատասխանելու վերջնաժամկետը՝ 2010թ.-ի դեկտեմբերի 7, որ ամսաթվով էլ հենց թվագրված էր պատասխանը:

Ինչպես նշվեց, ԻԱԿ-ը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը 2-րդ՝ 07.02.2011թ.-ի հարցումը ստիպված է եղել ուղարկել ուղարկել է կրկնակի անգամ՝ նաեւ 2011թ.-ի մարտի 29-ին (տես՝ էջ 1, 2): ԱԻ նախարարությունը ԻԱԿ-ի այս հարցմանը պատասխանել է հղումով՝ 19-օրյա ժամկետում, իսկ 29.03.2011թ.-ի կրկնակի հարցմանը չի պատասխանել: Ժամկետների առումով ԱԻՆ պատասխանը վատագույններից է: Ժամկետների առումով վատագույն արդյունքներ ունեն նաեւ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարություն, որը ԻԱԿ-ի 2-րդ հարցմանը պատասխանել է 18-օրյա ժամկետում, եւ ՀՀ արդարադատության նախարարությունը, որը ԻԱԿ-ի 1-ին հարցմանը պատասխանել է 23-օրյա ժամկետում: Ժամկետների առումով ՀՀ պաշտպանության նախարարությունը հակասական արդյունք է ցույց տվել. ԻԱԿ-ի 1-ին հարցմանը 5-օրյա ժամկետում մերժումով պատասխանելով՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը ժամկետների առումով լավագույններից էր: Սակայն ԻԱԿ-ի 2-րդ հարցմանը ՀՀ ՊՆ-ը մերժումով պատասխանել է 25-օրյա ժամկետում, որը ԻԱԿ-ի ուղարկած բոլոր հարցումների հաշվարկավ ժամկետների առումով ամենավատ արդյունքն է:

Հարկ է նշել, սակայն, որ բոլոր նախարարությունների առումով հարցումներին պատասխանելու վատագույն արդյունքները ԻԱԿ-ի հարցումներին չպատասխանած ՀՀ առողջապահության եւ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություններինն են (տես՝ էջ 1, 2):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԻԱԿ-ի ուղարկած 2 հարցումներին նախարարություններից յուրաքանչյուրը տարբեր ժամկետներում է պատասխանել, եւ այդ ժամկետները համեմատելու հնարավորություն տալու համար դրանք նույնպես կներկայացնենք աղյուսակի տեսքով.

Հ/Հ	Նախարարությունը	1-ին հարցման պատասխանի ժամկետը	2-րդ հարցման պատասխանի ժամկետը
1.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	6 օր	8 օր
2.	ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունություն	13 օր (6-օրյա ժամկետում տրամադրել էր ծանուցումը)	9 օր
3.	ՀՀ առողջապահության նախարարություն	Անպատասխան է թողել հարցումը	Անպատասխան է թողել հարցումը
4.	ՀՀ արդարադատության նախարարություն	23 օր	10 օր
5.	ՀՀ արտակարգ իրավիճանկերի նախարարություն	Անպատասխան է թողել հարցումը	Հարցմանը 19-օրյա ժամկետում պատասխանել է հղումով, կրկնակի հարցումն անպատասխան է թողել
6.	ՀՀ արտաքին գործերի նախարարություն	6 օր	11 օր
7.	ՀՀ բնապահպանության նախարարություն	10 օր	8 օր
8.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	9 օր	7 օր
9.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	13 օր	11 օր
10.	ՀՀ էներգետիկայի եւ բնական	6 օր	10 օր

	պաշարների նախարարություն		
11.	ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն	5 օր	8 օր
12.	ՀՀ մշակույթի նախարարություն	11 օր	4 օր
13.	ՀՀ պաշտպանության նախարարություն	5-օրյա ժամկետում մերժել է տեղեկատվության տրամադրումը	25-օրյա ժամկետում մերժել է տեղեկատվության տրամադրումը
14.	ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարություն	6 օր	9 օր
15.	ՀՀ սփյուռքի նախարարություն	5 օր	7 օր
16.	ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարություն	10 օր	18 օր
17.	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	10 օր	7 օր
18.	ՀՀ ֆինանսների նախարարություն	6 օր	8 օր